

**ԽՈՐՀՐԴԻ 1976 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՐԱՀԱՆԳ**

**Ճանապարհային տրանսպորտի ոլորտի որոշ վարորդների նվազագույն վերապատրաստում  
տրամադրելու մասին (76/914/ԵՏՀ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, մասնավորապես, դրա 75-րդ հոդվածը,

հաշվի առնելով Խորհրդի «Ճանապարհային տրանսպորտի վերաբերյալ սոցիալական հարցերով որոշ օրենսդրության ներդաշնակեցման մասին» 1969 թվականի մարտի 25-ի թիվ 543/69 կանոնակարգը (ԵՏՀ) (1)՝ վերջին անգամ փոփոխված թիվ 515/72 (2) կանոնակարգով եւ, մասնավորապես, այդ կանոնակարգի (5)(1)(բ) հոդվածի երկրորդ պարբերությոն ու (2) (գ) կետը,

հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (3),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական կոմիտեի եզրակացությունը (4),

քանի որ թիվ 543/69 կանոնակարգի (ԵՏՀ) 5(1)(բ) հոդվածի երկրորդ պարբերությոնի համաձայն՝ 7.5 մետրիկ տոննա առավելագույն արտոնված քաշ ունեցող ապրանքների տեղափոխման համար նախատեսված փոխադրամիջոցի վարորդը, եթե նա 21 տարեկանից փոքր է, պետք է ունենա մեկ անդամ պետության կողմից ճանաչվող մասնագիտական պատրաստվածություն վկայագիր, որով հաստատվում է, որ այդ վարորդն անցել է ճանապարհով ապրանքների տեղափոխման համար նախատեսված փոխադրամիջոցների վարորդների համար նախատեսված վերապատրաստման դասընթաց,

քանի որ թիվ 543/69 կանոնակարգի (ԵՏՀ) 5(2) հոդվածի համաձայն, ուղեւորների տեղափոխման համար նախատեսված եւ կանոնակարգով կարգավորվող փոխադրամիջոցի վարորդը պետք է լինի առնվազն 21 տարեկան եւ պետք է բավարարի այդ պարբերությամբ սահմանված պայմաններից որեւէ մեկը,

քանի որ այդ պայմաններից մեկում պահանջվում է, որ վարորդն ունենա մասնագիտական պատրաստվածության վկայագիր, որը ճանաչվում է անդամ պետություններից որեւէ մեկի կողմից եւ հաստատում է, որ այդ վարորդն անցել է ավտոճանապարհով ուղեւորների տեղափոխման համար նախատեսված փոխադրամիջոցների վարորդների վերապատրաստման դասընթացը,

քանի որ նման վերապատրաստման նվազագույն պահանջները սահմանելու համար հաշվի պետք է առնվի, մասնավորապես, ճանապարհային տրանսպորտով ապրանքներ եւ ուղեւորներ տեղափոխելու պայմանների տարբերությունները,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ

### *Հոդված 1*

1. Ցանկացած անձ, ով ունի համապատասխան պետական վարորդական իրավունք եւ ով անցել է սույն Հրահանգի հավելվածում նշված առարկաների գծով մասնագիտական դասընթաց, համարվում է ավտոճանապարհով ապրանքների տեղափոխման համար նախատեսված փոխադրամիջոցների վարորդների նվազագույն վերապատրաստում անցած անձ, ինչպես նշված է թիվ 543/69 կանոնակարգի (ԵՏՀ) 5(1)(բ) հոդվածի երկրորդ պարբերության մեջ կամ ավտոճանապարհով ուղեւորների տեղափոխման համար նախատեսված փոխադրամիջոցների վարորդների նվազագույն վերապատրաստում անցած անձ, ինչպես նշված է նույն հոդվածի 2 (գ) պարբերության մեջ:

2. 1-ին պարբերության մեջ նշված մասնագիտական կրթության վերապատրաստման դասընթացի ծրագիրը եւ կազմակերպումը սահմանվում է անդամ պետության կողմից: Այս դասընթացը ավարտելու մասին հիմնավորումը կատարվում է պետության կողմից պետության վերահսկողության տակ գործող՝ պետության կողմից այդ նպատակով նշանակված մարմինների կողմից անցկացվող քննության կամ ստուգման միջոցով:

3. Անդամ պետությունը կարող է պահանջել, որ իր տարածքում ազգային փոխադրումներ իրականացնող վարորդները եւ այդ պետությունում գրանցված փոխադրամիջոցներով միջազգային փոխադրումներ իրականացնող վարորդներն անցնեն առավել խորացված վերապատրաստում, քան սահմանված է հավելվածում: Նման վերապատրաստում կարող է լինել անդամ պետության կողմից արդեն իրականացվող վերապատրաստումը կամ այնպիսի վերապատրաստում, որն անդամ պետությունը որոշել է իրականացնել ապագայում:

### *Հոդված 2*

1. Թիվ 543/69 կանոնակարգի (ԵՏՀ) 5(1)(բ) հոդվածի երկրորդ պարբերություն եւ 5(2)(գ) հոդվածում նշված մասնագիտական պատրաստվածության վկայագիրը տրամադրվում է պետության կամ պետության կողմից նշանակված մարմինների կողմից՝ պետական հսկողության ներքո այն անձանց, ովքեր բավարարում են սույն Հրահանգի 1-ին հոդվածում սահմանված պահանջները:

2. 1-ին պարբերության մեջ նշված դրույթների համաձայն ձեռք բերված իրավունքները, նախքան սույն Հրահանգն իրականացնելու նպատակով ընդունված ազգային դրույթներն ուժի մեջ մտնելը, վավեր են այնպես, ինչպես սույն Հրահանգի համաձայն տրամադրված վկայագրերը:

### *Հոդված 3*

1. Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո գործողության մեջ են դնում սույն Հրահանգի պահանջների կատարման համար անհրաժեշտ միջոցներ՝ դրա մասին ծանուցումից հետո երկու տարվա ընթացքում:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն Հանձնաժողովին տրամադրում է վկայագրի օրինակները կամ համարժեք փաստաթղթեր, որն այդ անդամ պետությունն ընդունում է 2(1) հոդվածն իրականացնելու նպատակով: Հանձնաժողովն այդ տեղեկություններն ուղարկում է անդամ պետություններ:

### *Հոդված 4*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին

Կատարված է Բրյուսելում 1976թվականի դեկտեմբերի 16-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Թ. Է. ՎԵՍԵՐՏԵՐՓ

**ԹԻՎ 543/69 ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ (ԵՏՀ) 5(1)(բ) ԿԱՄ (2)(գ) ՀՈԴՎԱԾԻ ԻՄԱՍՏՈՎ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Մասնագիտական պատրաստվածության վկայագիր տրամադրելու նպատակով վերապատրաստումն ընդգրկում է առնվազն հետևյալ թեմաները, եթե այդ թեմաները ներառված չեն վարորդական իրավունք ստանալու համար անցկացվող վերապատրաստման մեջ:

1. Փոխադրամիջոցի կառուցվածքի եւ հիմնական մասերի մասին գիտելիք:

1.1. Կառուցվածքի եւ շահագործման մասին հետևյալ գիտելիքները՝

- ներքին այրման շարժիչ.
- յուղի եւ սառեցման համակարգեր.
- վառելիքի համակարգ.
- էլեկտրական համակարգ.
- մարտկոցն աշխատեցնելու համակարգ.
- փոխանցման համակարգ (կցորդիչ, փոխանցման տուփ եւ այլն)

1.2. յուղի եւ անտիֆրիզի պաշտպանության մասին ընդհանուր գիտելիք.

1.3. անիվները հանելու եւ փոխարինելու ժամանակ նախազգուշական միջոցների մասին գիտելիք.

1.4. անվադողերի կառուցվածքի, ամրացման, ճիշտ օգտագործման եւ խնամքի մասին գիտելիք.

1.5. արգելակի տեսակների, շահագործման, հիմնական բաղադրիչների, ամրացման, օգտագործման եւ ընթացիկ շահագործման մասին գիտելիք, ինչպես նաեւ գիտելիք՝ փոխադրամիջոցներն իրար միացնելու համակարգերի մասին.

1.6. անսարքությունների պատճառները հայտնաբերելու մեթոդների մասին գիտելիք.

1. 7. փոքր անսարքությունները վերանորոգելու մասին գիտելիք՝ ճիշտ գործիքների օգնությամբ.

1.8. փոխադրամիջոցների կանխարգելիչ շահագործման եւ անհրաժեշտ ընթացիկ վերանորոգում կատարելու մասին ընդհանուր գիտելիք:

2. Տրանսպորտի ոլորտի եւ վարչական ընթացակարգերի մասին ընդհանուր գիտելիքներ

2.1. ճանապարհային քարտեզներ եւ դրանց ինդեքսներն օգտագործելու բավարար աշխարհագրական գիտելիք եւ ընդհանուր ունակություն

2.2. փոխադրամիջոցների՝ տնտեսական տեսանկյունից խնայողաբար օգտագործում

2.3. փոխադրամիջոցների ապահովագրության հետ կապված՝ դժբախտ պատահար եւ նմանատիպ դեպք (օրինակ՝ հրդեհ) տեղի ունենալուց հետո ձեռնարկվող քայլերի մասին գիտելիք

2.4. տրանսպորտի տվյալ տեսակի, ապրանքների կամ ուղեւորների համար կիրառելի ազգային օրենսդրության մասին գիտելիք.

ապրանքներ տեղափոխող փոխադրամիջոցների վարորդների դեպքում՝

2.5. համաձայնեցված պայմանների համաձայն՝ ապրանքների ստացման, տեղափոխման եւ առաքման հետ կապված վարորդի պարտավորությունների մասին տարրական գիտելիքներ.

2.6 ապրանքների ազգային եւ միջազգային տեղափոխման պահանջների համաձայն՝ փոխադրամիջոցի եւ տրանսպորտային փաստաթղթերի մասին գիտելիք.

2.7. ապրանքներ բեռնելու եւ բեռնաթափելու տեխնիկայի ու բեռնելու եւ բեռնաթափելու սարքավորումների կիրառության մասին գիտելիք.

2.8. վտանգավոր ապրանքների հետ աշխատելու եւ դրանք տեղափոխելու դեպքում ձեռնարկվող նախազգուշական միջոցների մասին հիմնական գիտելիք.

ուղեւորներ տեղափոխող փոխադրամիջոցների վարորդների դեպքում՝

2.9. ուղեւորներ տեղափոխելու հետ կապված վարորդի պարտավորությունների մասին գիտելիք.

2.10. փոխադրամիջոցի եւ ուղեւորների ազգային ու միջազգային տեղափոխման համար պահանջվող՝ ուղեւորների փաստաթղթերի մասին գիտելիք:

3. Ապրանքներ կամ ուղեւորներ տեղափոխելու փորձառություն

3.1. ապրանքների տեղափոխման փոխադրամիջոցների վարորդների դեպքում՝

ավելի քան 7.5 մետրիկ տոննա քաշ ունեցող փոխադրամիջոցներ վարելու եւ մանևրելու, ինչպես նաեւ այլ մեքենա իր փոխադրամիջոցին կապելու գործնական փորձառություն

3.2. ուղեւորների տեղափոխման փոխադրամիջոցների վարորդների դեպքում՝

ավտոբուսներ կամ տուրիստական ավտոբուսներ վարելու եւ մանևրելու գործնական փորձառություն:

1) ՊՏ թիվ L 77, 29.03.1969թ, էջ. 49.

2) ՊՏ թիվ L 67, 20.03.1972թ., էջ. 11.

3) ՊՏ թիվ C 46, 09.05.1972թ., էջ 8. 4) ՊՏ թիվ C 88, 06.09.1971թ., էջ 14: